

ՍԷՐ ԱՌԱՍՏՈՂԱԾ.



Երբ փարիսեցի դպիրներից մէկը հարցրեց Երկնաւոր Արդապետին, թէ որն է ամենամեծ պատուիրանը՝ պատասխան ստացաւ. «Սիրեցենս զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն մտաց քոց. այս է մեծն և առաջին պատուիրան. և երկրորդն նման սմին. սիրեցենս զընկեր քոյ իբրեւ զանձն քո» (Մթ. ԻԲ. 35—39). Դորանով նա՝ ի հարկ է՝ չկամեցաւ պատուիրանների մէջ դասաւորութիւն դնել, մեծ ու փոքր որոշել՝ մին աւելի միւսը պակաս խտութեամբ պահելու համար, ինչպէս որոշում էին իրենք դպիրները, այլ այդ խօսքերի վերայ աւելացնելով անմիջապէս՝ «Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կանս, ցոյց տուաւ. թէ Աստուծոյ բոլոր պատուէրները մի աղբիւրից են բղխում, մի ընդհանուր սկզբունք ունին, որով առաջնորդուողը կատարում է միւս բոլորն արդէն ինքնաբերաբար՝ ոչ իբրեւ արտաքուստ ճշնող պարտագիր մի օրէնք, այլ իբրեւ իւր ներքին կեանքի, իւր բարոյական կամքի անհրաժեշտ պտուղը. «Յայս երկուս պատուիրանս» ասած է՝ երկու և անջատ Հին Ատակարանի մէջ, որից և բառ առ բառ առնուած են նոքա (Երկ. Օր. 2. 5. և Աւտ. ԺԺ. 18). բայց Փրկիչը նոցա միացնելով և ցոյց տալով, որ նոքա այն ժամանակ միայն իրենց իսկական նշանակութիւնը պահած և իրօք կատարուած կլինին, երբ մէկը միւսին լրացնէ, նորա հիմքը կազմէ և ուղղութիւնը որոշէ՝ բոլորովին նոր իմաստ, նոր բովանդակութիւն է տալիս նոցա և այդպիսով յիրաւի մեր բարոյական կեանքի համար միակ առաջնորդող գաղափար, բոլոր օրէնքների և մարգարէութեանց տեղը բռնող անզուգական մեծ պատուիրան դարձնում:

Մեր առ Աստուած ունենալիք սիրոյ մասին Փրկիչն առհասարակ շատ քիչ է խօսում, թէ և ոչ մի առիթ բաց չէ թողնում սովորեցնելու, որ մեր պարտականութիւնները դէպի Աստուած ամենից աւելի գեղեցիկ կերպով գործ դրած ենք լինում, երբ գործ ենք դնում մեր դէպի ընկերն ունեցած պարտականութիւնները, և որ հետեւաբար ճշմարիտ սիրով միայն այն ժամանակ կարող ենք Աստուծուն սիրել, երբ անպայման սիրով սիրում ենք ընկերին: Սակայն կասկած չկայ ի հարկ է, որ նա սերը առ Աստուած համարում է աղբիւր և հիմք ամենայն արդարութեան, Մատթէոս Ե. գլուխ՝ դէպի Աստուած արդարութիւնը տանող արդարութեան ստուածոյ արքայութիւնը տանող արդարութեան ստուածոյ արքայութիւնը յետոյ, նա մեր առաջնորդութեան պահանջ է դնում, ձգտել լինել կատարեալ, ինչպէս մեր Երկնաւոր Հայրը կատարեալ է, ինչպէս զի իրաւունք ունենանք նորա որդիներ կո-

չուելու և նորա արքայութիւնը ժառանգելու. իսկ կատարեալ լինել ինչպէս Աստուած, ասում է նա, կարելի է այն ժամանակ միայն, երբ մենք սովորում ենք սիրել այնպէս, ինչպէս նա գիտէ սիրել, «Յայսմ է սէրն — բացատրում է ապա Տիրոջ սիրելի աշակերտը — ոչ զի մէք սիրեցաք զԱստուած, այլ զի նա նախ սիրեաց զմեզ և առաքեաց զՈրդին Իւր ի քաւութիւն մեղաց մերոց». և այդտեղից հետեւեցնում է. «Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ, և կամ «Սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է, և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ» (Ա. Յովհ. Գ. 10, 19 և 7). Հետեւաբար այն սէրը, որ աւետարանն է պահանջում, մի քնական երեւոյթ չէ մեր մարմնաւոր կեանքի մէջ՝ մարդկային հոգու սեփական արդիւնքը, այլ անդրադարձումն աստուածային գերբնական սիրոյ. ինչ է ճշմարիտ սէրը զգում և ըմբռնում ենք միւրք միայն այն ժամանակ, երբ տեսնում ենք, թէ ինչպէս Աստուած յայտնեց իւր կատարեալ սէրը դէպի մարդիկ, Իւր Միածին Որդուն աշխարհ ուղարկելով, թոյլ տալով, որ նա յանապիս խոնարհի և չարչարուի մեղաւոր մարդկութեան համար (Յովհ. Գ. 16. Հռոմե Ե. 8.). և երբ այդպէս երախտագիտութեան զգացումով լեցուած՝ աչք ենք բարձրացնում դէպի մեր Հայրը, որ որոնել հանել է մեզ կորստեան անդունդից, և սովորում ենք փոխադարձ սիրով նորան սիրել՝ այդ սէրը դառնում է այնուհետեւ գործօն ոյժ մեր մէջ, որ արտայայտուում է ինքնաբերաբար նաև դէպի բոլոր մեզ նման մարդիկ՝ ոչ միայն դէպի արդարը, հաճելին, մերձաւորը, բարեկամը, այլ և դէպի խորթը, թշնամին, անարդարը:


Մեր սէրն առ Աստուած անմիջապէս ցոյց ենք տալիս մենք կատարեալ որդիական անձնուիրութեամբ՝ մեր անպայման վստահութեամբ, թէ մի երկնաւոր Հայր ունինք, որ մեր բոլոր պէտքերը սիրալիր խնամքով հոգում է. մի ամենագէտ և ամենակարող Հայր, առանց որի կամքի մեր գլխի մի մագն անգամ տեղից չի շարժի (Մատթ. 2. 55 2. Ժ. 36). Ուստի մեր յարաբերութիւնն Աստուծոյ հետ որոշելու համար աւետարանի մէջ աւելի հաւատաւ խօսքն է գործածուում քան սէրը. Յիսուս զայրանում և շատ անգամ յանդիմանում է աշակերտներին նոցա հաւատի պակասութեան համար. յանդիմանում է, որ նոքա ալեկոծուած ծովի վերայ հոգու արիութիւնը կորցնում և թոյլ են տալիս իրենց մի բոլոր կասկածելու, թէ Աստուծոյ արքայութեան առաջին ժառանգներին իւր վերայ կրող նաւն ընկղմել կարող է (Մարկ. Գ. 40). Ամենակալ Աստուծոյ հետ մեզ կապող հաւատը ներկայացնում է նա իբրեւ մի ոյժ, որ սարերը տեղահան անել կարող է (Մարկ. ԺԱ. 23). Այդպիսի հաւատոյ կամ սիրոյ ամենապարզ և կենդանի ար-

տայայտութիւնն է աղօթքը՝ որդիական անկեղծութեամբ ու վստահութեամբ արտասանած աղօթքը՝ երբ աղօթողն ամենեւին չի երկմտում թէ Երկնաւոր Հայրը իւր խնդրածքը պէտք է լսէ և կատարէ՝ ի հարկ է այն, ինչ որ իւր համար բարի է և ինչ որ Նա Ինքն, ամենիմաստ և գորովագութ Հայրը, ամենից լաւ ընտրել կարող է (Մատթ. Լ. 7—11)։ Ահա այս մտքով՝ իբրեւ տիպար, իբրեւ կենդանի օրինակ, թէ ինչպէս պէտք է լինի Աստուծոյ սիրով լեցուած ջերմեռանգն սրտի զեղումը՝ Փրկիչն ընծայել է մեզ տերունական աղօթքը՝ Հաւատացեալ հոգին կտրուում է այստեղ ամենից առաջ բոլոր երկրաւոր զբաղմունքներից, սաւառնում է գէպի Երկնաւոր Հօր կայանները, փափագում է, որ Նորա անունը սուրբ լինի՝ յայտնուի Նա աշխարհին Իւր բոլոր սրբութեամբ և հաստատէ այստեղ Իւր թագաւորութիւնը։ Իւր կատարեալ իշխանութիւնը, որպէս զի երկնային երանութիւնը երկրի վերայ ևս տիրէ, և ինքն աղօթողը ուրիշների հետ մէկտեղ մասնակից լինի այդ երանութեան, Իւր հոգեւոր պէտքերը, Իւր յաւիտեական կեանքի հոգսերն այսպէս Տիրոջ ձեռքը յանձնելուց յետոյ միայն Նա համարձակութիւն է ստանում Նաեւ իւր մասնաւոր աշխարհային կեանքի պիտոյքների համար խնդրելու՝ ամենաշափաւոր կերպով, և ապա խնդրում է վերացնել մէջտեղից այն արգելքները, որոնք պատրաստ են հանդէս գալ ամեն բոպէ և բաժանել, խորթացնել Նորան իւր Հօրից։ Սորանով բացատրուում է Նաեւ աղօթքի իսկական նպատակը. ոչ թէ ճնշումն գործ դնել Աստուծոյ վերայ, որ ոչինչ չստան գիտէ արդէն, թէ մեզ ինչ է պէտք, այլ բանալ Նորա առաջ մեր սիրտը, ցոյց տալ մեր ընդունակութիւնը Նորա միշտ պատրաստ շնորհների համար։ Այդ պատճառով և արգելում է Փրկիչը շատախօսել աղօթելիս, և կատարեալ պարզութիւն է պահանջում՝ կատարեալ խոնարհամտութիւն, որ արգիւնք է այն գիտակցութեան, թէ մենք ըստ ամենայնի մեղաւոր և պարտապան ենք Աստուծոյ առաջ և միայն ընդունել կարող ենք Նորանից, ոչինչ տալ։

Սիրել Աստուծուն ահա այսպիսի զգացումներով՝ այդ նշանակում է ընդունել Նորան իբրեւ բոլոր ճշմարիտ, վսեմ, յաւիտեական բարիքների ամփոփումն, Նորան նուիրուել ամբողջապէս և Նորանից դուրս ոչ մի ժամանակաւոր բարիք չճանաչել, որ մեզ Նորանից հեռացնել կարող էր, Խընդիրն այն չէ ի հարկ է, որ այդպիսով զրկենք մեր անձը երկրաւոր բարիքներից, արհամարհենք բնական աշխարհի գեղեցկութիւնները։ Ինքը Փրկիչն, ինչպէս յայտնի է, ոչ մէկն էր անում և ոչ միւսը, և Աստուծոյ ստեղծած բարիքները Աստուծոյ գծած սահմաններում վայելել ոչ որի չէր արգելում։ միակ աշխարհային բարիքը, որին Նա իրօք գէտ

է, որի մասին առանց արգար զայրոյթի խօսել չէ կարող՝ աշխարհի կուռք անիրաւ մամոնայն է, այն պատճառով, որ այստեղ բոլոր մարմնաւոր ցանկութիւնները մարմնացած, գուցէ լաւ ևս է ասել գաղափարականացած՝ են ներկայանում։ Սակայն նոյն իսկ այդ անիրաւութեան մամոնայն, կարելի է համարում Նա մի բարի նպատակի համար գործ դնել (Ղուկ. ԺԶ. 9—11), և նպատակայարմար գործադրութեամբ բարի և արգար են դառնում աշխարհի բոլոր բարիքները, Հարկաւոր է միայն, որ մեր սիրտը երկու տեղ բաժանուած չլինի, որ մեր բոլոր իղձերի միակ և վերջնական նպատակը Աստուծոյ լինի։ Նորա մօտ ժողովուրին մեր սրտի բոլոր գանձերը, իսկ աշխարհայինը միայն իբրեւ միջոց ծառայէ այդ գանձերը ժողովելու և տեղ հասցնելու։ Մենք պէտք է պատրաստ լինինք, երբ Տէրը մեզնից պահանջում է, զոհելու Նորա համար ամեն ինչ, Նաեւ մեր անձը, որովհետեւ մեզ, մեր աշխարհային եւս ը կորցնել՝ Աստուծուն գտնել է նշանակում, իսկ Աստուծուն գտնել՝ ամեն ինչ գտնել է։

Կ. Վ.



«ԿԱՆՈՆ»

ԹԱԿԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ»



Հայաստանի առաջին Լուսաւորիչը սուրբ առաքեալն Թադէոս, մարտիրոսական պատկ ընդունեց Շաւարշան քաղաքի մօտ, ուր և եղաւ Նորա ս. մարմնի ամփոփումը։ Ս. Առաքեալի յիշատակը շատ կանուխ ժամանակներից կատարւում է Հայոց մէջ. Նորա վկայաբանութիւնը Թարգմանուեցաւ հայերէն Ծ. դարում Սամուէլ կաթիկոսպոսի ձեռքով. Նորա ս. նշխարներն յայտնուեցան տեսիլքով Կիրակոս ճգնաւորին Տ. Թովհան Մանգակունի կաթողիկոսի օրով Վահան Մամիկոնեանի մարգպանութեան ժամանակ։ Մովսէս Խորենացին պատմելով ս. Գրիգոր Լուսաւորչի ծննդեան մասին, յիշում է, որ Նորա մօր յղուութիւնն եղաւ «մօտ առ դիրս սրբոյ առաքելոյն» իսկ ս. Հռիփսիմեանց ներբողի մէջ յիշում է ս. Գրիգորի կոչումն իբրեւ յաջորդ ս. առաքելոյն Թադէոսի և Բարթողիմէոսի թէ պատմութեան և թէ ներբողի մէջ Մ. Խորենացին յայտնում է, որ աստուածային